Արձանագրություն N 3
«ԳՔ –ԳՀԱՊՁԲ-19/05» **ծածկագրով Գնանշման հարցման միջոցով**
գնում կատարելու հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» «հոկտեմբերի» 2019թ., ժ 12.00

Մասնակցում էին՝
Նիստի նախագահ՝ Հ. Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Բաբայան, Զ.Շահինյան, Ռ. Ղարագուլյան և Մ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հարությունյան

1. **Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակիցների մասին հարցումը և դրա պատասխանը**

(Հ. Գրիգորյան)

1.1 Գնահատող հանձնաժողովը ընդունել ի գիտություն, որ 02.10.2019թ.-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտե կատարվել է հարցում ընթացակարգի շրջանակներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասին:

1.2 Հիմք ընդունելով 07.10.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ուղարկված հարցման պատասխանը /որը կցվում է արձանագրությանը/ «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. **Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրերի համապատասխանությունը**

(Հ. Գրիգորյան)

2.1 Գնահատող հանձնաժողովը ընդունել ի գիտություն, որ 27.09.2019թ.-ին առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ծանուցվել է առաջարկվող ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրերի պահանջների համապատասխան ներկայացնելու մասին: «Արպանիվ» ՍՊԸ -ի կողմից բոլոր պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են և համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. **Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի անդամների ներկայացված գնահատման արդյունքների ամփոփման մասին**

(Հ. Գրիգորյան)

3.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, համակարգողը ամփոփեց մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

1.	«Արպանիվ» ՍՊԸ		
	Հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սահմանված կարգին.	-	Բավարար
	Բացված ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայությունը.	-	Բավարար
	Ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով (ծանուցումով) սահմանված վավերապայմաններին համապատասխանությունը.	-	Բավարար
	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	-	Բավարար
2.	«Հույս- Սեդան» ՍՊԸ		
	Հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սահմանված կարգին.	-	Բավարար
	Բացված ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայությունը.	-	Բավարար
	Ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով (ծանուցումով) սահմանված վավերապայմաններին համապատասխանությունը.	-	Բավարար
	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	-	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3.2 Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքները՝ բացված ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց հրավերով (ծանուցումով) սահմանված վավերապայմաններին (պայմաններին) համապատասխանության համար ստացած «Բավարար» գնահատականը հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների

թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ «Արպանիվ» ՍՊԸ –ին ին 1,2,4,5 չափաբաժիններով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4. Ընտրված՝ հաղթող մասնակցի անվանումը, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի հաստատումը և հաջորդ նիստի անցկացման օրակարգը

(Հ. Գրիգորյան)

4.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները և «ԳՔ–ԳՀԱՊՁԲ-19/05» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին ներկայացված գնային առաջարկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել որպես ընթացակարգի պայմաններին բավարարող հայտ և գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝«Արպանիվ» ՍՊԸ –ին 1,2,4,5 չափաբաժիններով

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ԳՔ–ԳՀԱՊՁԲ-19/05» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում հաղթող՝ ընտրված մասնակիցների հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4.3 Ընտրված մասնակցին, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետի ավարտից հետո: Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ԳՔ–ԳՀԱՊՁԲ-19/05» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի ամփոփման նիստ հրավիրել պայմանագիր կնքելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին հասցեն ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 35/2 9-րդ հարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Գրիգորյան

Անդամներ՝ _____ Զ.Շահինյան

_____ Ռ. Ղարագուլյան

_____ Մ.Գրիգորյան

_____ Ա.Բաբայան

Քարտուղար՝ _____ Հ.Հարությունյան